

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

29.03.2019

Ք. Իջևան

Մասնակցում էին գիտխորհրդի 24 անդամներից 19-ը

ՕՐԱԿԱՐԳ

1. 2018-19 ուստարվա II կիսամյակի I ընթացիկ քննաշրջանի և ավարտական կուրսերի քննաշրջանի կազմակերպման հարցը (զեկ.՝ Կ. Պողոսյան):
2. Ավարտական աշխատանքների I նախապաշտպանության հարցը (զեկ.՝ Կ. Պողոսյան):
3. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմի հաստատման հարցը (զեկ.՝ Կ. Պողոսյան):
4. II կիսամյակում կուրսային աշխատանքների կատարման ընթացքը (զեկ.՝ ամբիոնի վարիչներ):
5. ԵՊՀ ԻՄ-ի 25-ամյակի միջոցառումների (սեպտեմբեր-հոկտեմբեր) ձևաչափի քննարկման հարցը:
6. Ընթացիկ հարցեր:

ԼՄԵՑԻՆ.

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը: Նա նշեց, որ 2018-2019 ուստարվա 2-րդ կիսամյակի 1-ին ընթացիկ ստուգումները և քննությունները, ինչպես նաև ավարտական կուրսերի հանրագումարային քննությունները նախատեսվում է իրականացնել սահմանված կարգի համաձայն՝ նախօրոք կազմած ժամանակացույցով /ապրիլի 08-ից մինչև ապրիլի 13-ը/: Նա ներկայացրեց 2018-2019 ուստարվա երկրորդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների ժամանակացույցը, նշեց, որ այն քննարկվել է ուսանողների հետ: Չեկուցողը տեղեկացրեց, որ հանրագումարային քննությունների, ընթացիկ քննությունների և ստուգումների հարցաշարերը նախապես տրամադրվել են ուսանողներին: Կազմված թեստերը ստորագրվել են

ամբիոնի վարիչի և կնքվել ֆակուլտետի դեկանի կողմից: Ընթացիկ ստուգումներն ու քննություններն առավել արդյունավետ դարձնելու նպատակով ստեղծվել են հանձնաժողովներ, որոնցում ընդգրկվել են ֆակուլտետի դեկանը, դեկանի տեղակալը, յուրաքանչյուր կրթական ծրագրի պատասխանատուն և քննող դասախոսը: Բացի այդ, ընթացիկ քննություններն ու ստուգումները կանցկացվեն հատուկ կահավորված լսարաններում, որտեղ կիրականացվի նաև տեսահսկում:

Քննական գործընթացի թափանցիկությունն ու հրապարակայնությունն ապահովելու նպատակով քննությունների արդյունքները տեղադրվում են մասնաճյուղի պաշտոնական կայքէջում և ուղարկվում ուսանողների էլեկտրոնային փոստերին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, Բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, Բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը, պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, Շ. Գասպարյանը, Վ. Հարությունյանը, Ա. Ղազարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել 2018-19 ուստարվա 2-րդ կիսամյակի 1-ին ընթացիկ քննությունների և ընթացիկ ստուգումների ժամանակացույցը:

ԼՄԵՑԻՆ.

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը: Զեկուցողը նշեց, որ սթ. ապրիլ և մայիս ամիսներին նախատեսվում է անցկացնել հինգ մասնագիտությունների գծով ավարտական աշխատանքների նախապաշտպանություն: Արդեն հաստատված են ապրիլ և մայիս ամիսներին նախատեսվող նախապաշտպանության օրերը`

- Պատմություն - 26. 04.19թ.
- Հայոց լեզու և գրակ. - 26. 04.19թ.
- Մանկ. և հոգեբ. - 26. 04.19թ.
- Անգլ. լեզու և գրակ. - 26. 04.19թ.
- Ֆրանս. լեզու և գրակ. – 03. 05.19թ.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, Բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, Բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը, պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, Շ. Գասպարյանը, Վ. Հարությունյանը, Ա. Ղազարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ամբիոնների կողմից ներկայացված նախապաշտպանությունների օրերն ընդունելի գիտություն:

ԼՄԵՑԻՆ.

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը: Զեկուցողը նշեց, որ սահմանված ժամկետում և սահմանված կարգով ամբիոնները ներկայացրել են ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմը (Հավելված 1), որը ներկայացվել է տնօրենության հաստատմանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, Բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, Բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը, պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, Շ. Գասպարյանը, Վ. Հարությունյանը, Ա. Ղազարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ամբիոնների կողմից ներկայացված ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմն ընդունելի գիտություն:

ԼՄԵՑԻՆ.

Օրակարգի 4-րդ հարցի վերաբերյալ զեկուցեցին ամբիոնի վարիչները: Զեկուցողները նշեցին, որ երկրորդ կիսամյակում նախատեսված կուրսային աշխատանքների կատարման գործընթացը սկսվել է 2018-2019 ուստարվա սեպտեմբերից: Անհատական բեռնվածությամբ նախատեսված կուրսային աշխատանք ղեկավարող դասախոսները ժամանակին ամբիոն են ներկայացրել

Թեմաները, որոնք քննարկվել են ամբիոնային նիստերում, կատարվել են շտկումներ: Ուսանողները ժամանակին տեղեկացվել են և իրենց նախաձեռնությամբ ընտրել են կոնկրետ թեմաներ: Նշվեց, որ կուրսային աշխատանքների թեմաները բավարարում են պահանջվող չափանիշները, ընտրված են այնպիսի թեմաներ, որոնք արդիական են, ուսանողի համար ներկայացնում են գիտական հետաքրքրություն:

Յուրաքանչյուր ղեկավար ամսվա մեջ որոշակի գրաֆիկով կոնսուլտացիոն հանդիպումներ է ունենում ուսանողների հետ: Նշվեց, որ յուրաքանչյուր դասախոսի հանդիպման ժամանակացույցը հաստատված է ամբիոնի կողմից և փակցված է հայտարարությունների տախտակին:

Զեկուցողները ներկայացրին, որ ուսանողների զգալի մասը գրեթե ավարտում է աշխատանքը, իսկ այն ուսանողները, որոնք դեռևս չեն հասցնում, ավելի հաճախակի են հանդիպումներ ունենում ղեկավարների հետ, և սահմանված ժամանակահատվածում աշխատանքները կհանձնվեն ամբիոն:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Կ. Պողոսյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը, Շ. Գասպարյանը, Վ. Հարությունյանը, Ա. Ղազարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2018-2019 ուստարվա երկրորդ կիսամյակի կուրսային աշխատանքների կատարման ընթացքը համարել բավարար:

ԼՄԵՑԻՆ.

Օրակարգի 5-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի ղեկանը: Զեկուցողը նշեց, որ 2019 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին նախատեսվում է մասնաճյուղի հիմնադրման 25-ամյակին նվիրված միջոցառումների շարք, որին ամբիոնները պետք է ունենան ակտիվ մասնակցություն:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ամբիոնի վարիչները վստահեցրին, որ նախատեսում են իրենց աշխատանքային պլաններում ընդգրկել համապատասխան միջոցառումներ: Նախ և առաջ որոշվեց դիմել տնօրենությանը՝ առաջարկելով ձևավորել կազմկոմիտե, որը կհամակարգի կազմակերպվող միջոցառումները: Որպես միջոցառումների ձևաչափ՝ առաջարկվեցին հետևյալ տարբերակները՝ միջհամալսարանական ուսանողական գիտաժողով, գիտական նստաշրջանի կազմակերպում, ուսխորհրդի ուժերով գրական-երաժշտական միջոցառում, սպորտլանդիաներ, կլոր սեղան-հանդիպումներ՝ կայացած շրջանավարտների հետ, ցուցահանդեսներ, հուշամեդալների պատրաստում և հանձնում այն աշխատակիցներին, ովքեր աշխատում են ԵՊՀ ԻՄ-ի հիմնադրման օրից ի վեր: Առաջարկություն եղավ նախատեսել մասնաճյուղի շրջանավարտների ստեղծագործությունների և աշխատակիցների երկերի ցուցահանդես-վաճառք: Նշվեց նաև, որ ցանկալի կլինի, որ լրագրության և հասարակայնության հետ կապերի բաժինը պատրաստի տեսանյութ՝ ԵՊՀ ԻՄ-ի անցած ճանապարհի և լավագույն շրջանավարտների վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ԵՊՀ ԻՄ-ի 25-ամյակի միջոցառումների ձևաչափի հարցով ամբիոններում կազմակերպել քննարկումներ և առաջարկություններ ներկայացնել ֆակուլտետի գիտական խորհրդին:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
ՔԱՐՏՈՒՂԱՐ

Կ. Պողոսյան
Վ. Աղաբաբյան

2018-2019 ՈՒՍՏԱՐՎԱ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՑԱՆԿ

030400 «Պատմություն»

1. Նախագահ- Հարությունյան Գագիկ Սուրենի (ՀՊՄՀ Համաշխարհային պատմության ամբիոնի պրոֆեսոր, պ.գ.թ.),
2. Անդամ-Պոդոսյան Կարինե Պոդոսի - Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, բ.գ.թ., դոցենտ
3. Անդամ- Թինոյան Դավիթ Ֆերդինանդի - Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, պ.գ.թ., դոցենտ
4. Անդամ-Գրիգորյան Նաթելլա Սերոժի - Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի դոցենտ, պ.գ.թ.
5. Անդամ- Ալեքսանյան Հովհաննես Ստյոպայի – Սփյուռքի նախարարության Հայրենադարձության բաժնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ
6. Անդամ- Սիմոնյան Սամվել Սեյրանի – Խաչթառակի միջնակարգ դպրոցի տնօրեն
7. Անդամ - Զուրաբյան Մարատ Հովիկի-Ռուսաց լեզվի սեկցիայի դոցենտ, բ.գ.թ.

031000 «Հայոց լեզու և գրականություն»

1. Նախագահ- Դերիկյան Վարդան Գևորգի - ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն, բ.գ.դ.
2. Անդամ- Պոդոսյան Կարինե Պոդոսի - Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, բ.գ.թ., դոցենտ
3. Անդամ- Ավագյան Վաչագան Վարազդատի- Հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, բ.գ.թ., դոցենտ
4. Անդամ- Սարհատյան Աիդա Ասիլբեկի- Հայոց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
5. Անդամ- Ճաղարյան Անահիտ Լենտուշի- Իջևանի №5 հիմնական դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի
6. Անդամ- Ղուկասյան Անահիտ Գագիկի –Տավուշի մարզային գրադարանի տնօրեն

7. Անդամ - Սարուխանյան Մուշեղ Լևոնի-Հայոց լեզվի և գրականության ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ.

030300 «Հոգեբանություն», 051000 «Մանկավարժություն և հոգեբանություն»

1. Նախագահ- Հակոբյան Նաիրա Ռաֆիկի (ՀՀ ԳԱ գիտակրթական կենտրոնի դեկան, հ.գ.դ., պրոֆեսոր),

2. Պոդոսյան Կարինե Պոդոսի - Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, բ.գ.թ., դոցենտ

3. Անդամ- Սարգսյան Լևոն Կարոյի- Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, հ.գ.թ., դոցենտ

4. Անդամ-Գևորգյան Սրբուհի Ռաֆիկի-Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի պրոֆեսոր, հ.գ.դ.

5. Անդամ- Ներսիսյան Արմինե Անդրանիկի- «Հույսի կամուրջ» ՀԿ Իջևանի երեխայի զարգացման և

սոցիալական աջակցության կենտրոնի տնօրեն

6.Անդամ- Ղազումյան Մանե Սամվելի – Տավուշի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի

վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

7.Անդամ - Զուրաբյան Մարատ Հովիկի-Ռուսաց լեզվի սեկցիայի դոցենտ, բ.գ.թ.

031300 «Անգլերեն լեզու և գրականություն»

1. Նախագահ- Հարությունյան Լուսինե Արմենի (ՀՏՊՀ, Լեզուների ամբիոնի վարիչի պաշտոնակատար, բ.գ.դ., դոցենտ),

2. Անդամ- Պոդոսյան Կարինե Պոդոսի - Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, բ.գ.թ., դոցենտ

3. Անդամ- Հարությունյան Քրիստինե Մուրադի- Անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, բ.գ.թ., դոցենտ

4. Անդամ- Չուբարյան Աստղիկ Էդուարդի-ԵՊՀ Անգլիական բանասիրության ամբիոնի պրոֆեսոր, բ.գ.թ.

5. Անդամ-Հարությունյան Ռիմա Արմենի- Իջևանի №3 հիմնական դպրոցի անգլերեն լեզվի ուսուցչուհի

6. Անդամ-Աղիյան Քրիստինե Արծրունի- Իջևանի №4 հիմնական դպրոցի անգլերեն լեզվի ուսուցչուհի

031300 «Ֆրանսերեն լեզու և գրականություն»

1. Նախագահ- Ղազարյան Մելանյա Սմբատի - Վ. Բրյուսովի անվան ԵՊՀ Ֆրանսերենի լեզվի ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.

1. Անդամ- Պողոսյան Կարինե Պողոսի - Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, բ.գ.թ., դոցենտ

2. Անդամ- Մարդանյան Աիդա Սերոժի- Ֆրանսերեն լեզվի և գրականության ամբիոնի ասիստենտ

3. Անդամ- Կարապետյան Միրա Զավենի- Ֆրանսերեն լեզվի և գրականության ամբիոնի ասիստենտ

4. Անդամ- Աղբալյան Լուսինե Յուրիկի - Աչաջրի միջնակարգ դպրոցի ֆրանսերեն լեզվի ուսուցչուհի

5. Անդամ- Ղուլջյան Սուսաննա Մանուկի - Սևքարի միջնակարգ դպրոցի ֆրանսերեն լեզվի ուսուցչուհի